



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի առաջին եռամսյակում (վերլուծություն)

2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 38351 գործարք, որոնց քանակը 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 24.2 %-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 5.6 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10450 օտարման գործարքի 71.0 %-ը կազմել է առուվաճառքը, 28.0 %-ը՝ նվիրատվությունը և 1.0 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.2 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.6 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի առաջին եռամսյակում, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 28.4%-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 2.0 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.9 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի առաջին եռամսյակում, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 37.9 %-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 8.4 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Առաջին եռամսյակ 2015 թ.	Առաջին եռամսյակ 2016 թ.	Չորրորդ եռամսյակ 2015 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356900	356700
Քանաքեռ-Զեյթուն	282600	283000	282800
Նոր Նորք	253000	253800	253600
Ավան	260400	261400	261100
Էրեբունի	251600	252300	252200
Շենգավիթ	256900	257500	257350
Դավթաշեն	275500	276450	276300
Աջափնյակ	249650	250750	250400
Մալաթիա-Սեբաստիա	242800	243850	243600
Նուբարաշեն	156500	157100	157000
<b>Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)</b>	<b>274000</b>	<b>274600</b>	<b>274500</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.04 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 828 բնակարան, որի քանակը, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 24.7 %-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 3.8 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Առաջին եռամսյակ 2015 թ.	Առաջին եռամսյակ 2016 թ.	Չորրորդ եռամսյակ 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116000	116000
	Ապարան	57550	58200	58050
	Թալին	65900	66600	66300
Արարատ	Արտաշատ	97500	98600	98150
	Մասիս	115800	115800	115800
	Վեդի	100950	101600	101500
	Արարատ	75800	77300	77100
Արմավիր	Վաղարշապատ	154100	154200	154100
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87600	87550
Գեղարքունիք	Սևան	99200	99400	99400
	Գավառ	60000	60400	60300
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	44800	45100	45000
	Ճամբարակ	28700	28750	28750
Լոռի	Վանաձոր	88500	88600	88500
	Ստեփանավան	74600	74700	74600
	Սպիտակ	99800	99850	99800
	Ալավերդի	55100	55500	55400
	Տաշիր	47300	47400	47350
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20300	20500	20500
Կոտայք	Աբովյան	155000	155100	155100
	Նոր Հաճն	128550	128550	128550
	Բյուրեղավան	108100	108200	108200
	Եղվարդ	109350	109650	109500
	Հրազդան	63800	63900	63800
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
Շիրակ	Գյումրի	109200	109300	109250
	Արթիկ	66700	67100	66900
	Մարալիկ	40700	40950	40900
Սյունիք	Գորիս	122800	123500	123250
	Կապան	93450	94800	94350
	Սիսիան	91600	92100	92000
	Մեղրի	81300	82800	82500
	Ագարակ	47100	47600	47400
	Քաջարան	94600	94700	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	94900	95100	95000
	Եղեգնաձոր	125500	126000	125800
	Զերմուկ	112900	113100	112950
Տավուշ	Դիլիջան	113800	115300	115200
	Իջևան	118250	118500	118450
	Բերդ	60200	60400	60300
	Նոյեմբերյան	49850	50300	50200
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2016 թվականի առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.1 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 947 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 247 գործարք, մարզերում՝ 700 գործարք: 2016 թվականի առաջին եռամսյակում, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 24.9 %-ով, ընդ որում, Երևանում՝ 42.8 %-ով, մարզերում՝ 15.6 %-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.8 %-ով, ընդ որում, Երևանում՝ 6.8 %-ով, իսկ մարզերում՝ աճել 0.1 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Առաջին եռամսյակ 2015 թ.	Առաջին եռամսյակ 2016 թ.	Չորրորդ եռամսյակ 2015 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239750	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150800	150800	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	<b>286700</b>	<b>286700</b>	<b>286700</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի առաջին եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ

շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Առաջին եռամսյակ 2015 թ.	Առաջին եռամսյակ 2016 թ.	Չորրորդ եռամսյակ 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41100	41100
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100800	100800
	Ստեփանավան	90000	91100	91100
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157300	157300
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	119250	119250
	Արթիկ	63100	63400	63300
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100650	100650
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84600	84600
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90150	90150
	Եղեգնաձոր	116600	116750	116750
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	115450	115400
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբեղյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել է 3897 միավոր (1987.46 հա) հող, որից Երևանում՝ 256 միավոր (32.94 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 2327 միավոր (1831.81 հա), որից Երևանում՝ 13 միավոր (1.97 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 1063 միավոր (81.52 հա), որից Երևանում՝ 130 միավոր (6.25 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 358 միավոր (53.99 հա), որից Երևանում՝ 105 միավոր (24.28 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 31 միավոր (10.48 հա), որից Երևանում՝ 8 միավոր (0.44 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 13 միավոր (7.39 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 104 միավոր (2.27 հա),
- ջրային հող՝ 1 միավոր (0.002 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի առաջին եռամսյակում օտարված հողերից 3101 միավորի (1620.39 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 189 միավոր (25.98 հա), նվիրատվության գործարք՝ 770 միավոր (363.92 հա), որից Երևանում՝ 58 միավոր (6.50 հա) և փոխանակության գործարք՝ 26 միավոր (3.16 հա), որից Երևանում՝ 9 միավոր (0.46 հա):

Հանրապետությունում 2016 թվականի առաջին եռամսյակում 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 8.4 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 12.7 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 7.3 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել 32.6 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 315.60 հա, որից 304.60 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 26.0 %-ը կամ 806 միավորը (356.39 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 62 միավոր (2.69 հա), իսկ 73.4 %-ը կամ 2275 միավորը (1262.82 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 126 միավոր (23.29 հա): 2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 20 գործարք (1.17 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացված է 2016 թվականի առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով

և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	4	0.28	23	0.84	35	1.56	7	0.64	4	0.16	68	3.19	47	19.30
Արագածոտն	69	38.92	2	0.28	6	0.26	30	1.67	128	133.17	0	0.00	55	4.82	3	0.56
Արարատ	42	55.14	0	0.00	47	2.59	9	0.24	237	249.47	0	0.00	94	7.84	7	0.19
Արմավիր	10	14.48	2	0.13	2	0.01	4	0.07	222	233.35	4	0.35	108	10.59	7	0.32
Գեղարքունիք	8	27.16	2	0.39	8	1.15	32	3.41	70	67.73	1	0.12	46	6.06	4	0.98
Լոռի	3	1.73	1	0.02	13	0.28	10	3.78	285	124.05	0	0.00	11	1.00	7	0.31
Կոտայք	36	107.37	1	5.40	128	1.70	24	1.10	186	112.99	3	1.37	119	9.64	16	6.73
Շիրակ	30	12.08	0	0.00	15	2.05	33	1.44	157	114.15	0	0.00	32	3.36	9	0.35
Սյունիք	5	14.62	1	0.29	15	0.34	4	0.23	193	95.17	0	0.00	21	2.95	3	0.54
Վայոց ձոր	10	4.63	0	0.00	2	0.11	2	0.04	48	29.94	0	0.00	2	0.11	6	0.15
Տավուշ	13	47.37	1	0.13	11	0.70	8	0.21	36	14.20	3	0.08	15	1.17	3	0.02
Ընդամենը	226	323.50	14	6.92	270	10.03	191	13.75	1569	1174.86	15	2.08	571	50.73	112	29.45

Ստորև ներկայացված է 2016 թվականի առաջին եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	39	1.04	4	0.28	16	0.60	19	0.16	23	1.64	0	0.00	0	0.00	7	0.24	16	1.40
Արագածոտն	23	1.50	0	0.00	2	0.21	21	1.29	36	14.36	21	13.66	2	0.28	4	0.05	9	0.37
Արարատ	2	0.006	0	0.00	1	0.003	1	0.03	95	53.04	41	50.21	0	0.00	46	2.59	8	0.24
Արմավիր	5	0.08	0	0.00	2	0.01	3	0.07	13	14.611	10	14.48	2	0.13	0	0.00	1	0.001
Գեղարքունիք	5	0.89	1	0.35	2	0.24	2	0.30	45	31.22	8	27.16	1	0.04	6	0.91	30	3.11
Լոռի	9	0.09	0	0.00	5	0.08	4	0.01	18	5.72	3	1.73	1	0.02	8	0.20	6	3.77
Կոտայք	111	0.53	0	0.00	110	0.52	1	0.01	78	115.05	36	107.37	1	5.40	18	1.18	23	1.10
Շիրակ	32	3.18	0	0.00	7	1.87	25	1.31	18	6.54	2	6.23	0	0.00	8	0.18	8	0.13
Սյունիք	8	0.01	0	0.00	8	0.01	0	0.00	16	15.45	4	14.61	1	0.29	7	0.32	4	0.23
Վայոց ձոր	2	0.04	0	0.00	0	0.00	2	0.04	12	4.74	10	4.63	0	0.00	2	0.11	0	0.00
Տավուշ	7	0.33	0	0.00	4	0.24	3	0.09	26	48.10	13	47.37	1	0.13	7	0.47	5	0.13
Ընդամենը	243	7.6961	5	0.63	157	3.78	81	3.31	380	310.47	148	287.45	9	6.29	113	6.25	110	10.48

2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 78 գործարք (36.04 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի առաջին եռամսյակում, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 2.3 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 32.4 %-ով, իսկ մարզերում աճել 0.6 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 29.8 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 27.1 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 7.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 51.1 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի առաջին եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	16	9.47	74.3	1041.9	367.8	67	73.60	365.0	12000.0	3594.2
Ապարան						6	2.68	86.5	2727.3	634.5
Թալին	3	3.89	95.8	180.5	134.7	41	32.81	93.6	5494.5	788.7
Ծաղկահովիտ	2	0.30	517.8	522.5	520.1	12	23.75	79.5	1000.0	376.6
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	22	3.27	68.4	1662.7	1111.0	111	46.19	335.1	10833.3	2694.7
Մասիս	7	41.58	59.5	399.1	140.7	33	35.08	200.0	11904.8	3201.9
Վեդի	12	5.36	90.3	499.4	318.9	89	167.28	207.0	10795.1	1955.2
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	1.00	63.0	63.0	63.0	111	73.63	294.3	9090.0	1318.8
Բաղրամյան						35	104.38	90.6	2561.1	923.7
Վաղարշապատ	9	13.48	29.0	600.0	169.3	75	55.04	444.4	11764.7	1972.8
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	2	15.05	325.5	500.0	412.8	32	13.09	199.8	1875.0	489.7
Ճամբարակ						1	0.32	60.5	953.3	352.0
Մարտունի						10	3.53	51.1	2850.0	793.3
Սևան						8	2.11	52.2	2134.8	354.1
Վարդենիս	6	12.11	115.4	418.0	207.9	19	48.68	41.2	2575.1	412.9
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	2	0.71	2442.0	2561.8	2501.9	14	10.39	170.4	6424.2	586.3
Գուգարք						13	7.38	234.6	6065.9	821.2
Սպիտակ								250.0	5555.5	675.0
Ստեփանավան	1	1.02	123.9	123.9	123.9	13	11.44	90.6	1686.6	416.8
Տաշիր						243	90.60	45.3	1384.4	185.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	23	77.69	69.5	887.9	340.7	49	17.46	279.3	11942.7	3932.8
Եղվարդ	9	25.34	118.8	610.2	247.3	113	81.81	174.4	11971.8	2504.4
Հրազդան	4	4.33	85.4	897.3	397.4	23	13.60	130.5	10256.4	1034.3



Շիրակի մարզ										
Ախուրյան	1	5.08	103.5	103.5	103.5	57	42.22	252.0	1693.1	645.6
Ամասիա						2	2.92	40.9	261.0	136.5
Անի	1	1.15	93.0	93.0	93.0	53	40.05	110.6	546.9	452.6
Աշոցք						1	0.02	58.5	215.8	138.5
Արթիկ						43	28.05	79.4	1428.6	520.2
Սյունիքի մարզ										
Գորիս						4	3.52	92.6	1023.2	787.5
Կապան						93	49.93	120.0	841.6	423.3
Մեղրի	3	14.38	77.0	276.9	204.7	61	22.30	193.0	3000.0	784.6
Սիսիան	1	0.22	133.9	133.9	133.9	35	19.42	46.3	1977.4	600.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	10	4.63	37.1	252.7	62.0	37	17.05	125.0	10000.0	1746.4
Վայք						11	12.89	58.8	1430.7	581.7
Տավուշի մարզ										
Բերդ						23	9.17	213.3	3783.8	681.7
Իջևան	13	47.37	1039.5	3240.0	2159.8	6	1.63	267.5	9454.5	1493.3
Նոյեմբերյան						7	3.40	46.7	7368.4	985.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2016 թվականի առաջին եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գներ՝ 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գներ՝ 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մասվելագույն	Միջին			Նվազագույն	Մասվելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	42.0	4428.6	4571.4	4500.0	38	31613.0	130.7	22200.0	2591.6
Ապարան	2	472.0	271.5	553.0	412.3	5	4048.0	124.1	609.6	390.0
Թալին						10	8903.3	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						2	3630.0	60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ	10	7915.1	538.8	3561.6	1019.4	27	26220.2	173.9	7140.3	906.8
Մասիս	10	4421.5	801.4	3705.3	2898.1	41	26703.1	187.5	25000.0	1208.9
Վեդի	26	13556.9	667.2	3000.0	838.8	25	24296.5	126.1	5000.0	663.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						38	40865.0	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան						7	8771.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						61	52684.0	197.4	26528.4	1530.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						9	9616.0	186.6	1084.3	683.9
Ճամբարակ						1	1154.0	71.3	2286.2	146.8
Մարտունի	2	1648.0	112.6	376.2	244.4	26	33325.0	119.3	5000.0	280.4
Սևան	1	1322.2	413.0	413.0	413.0	2	1692.3	240.0	3110.4	335.0
Վարդենիս	3	6123.3	38.5	1200.0	612.8	8	14837.0	72.5	987.2	150.4
Լոռու մարզ										
Ալավերդի	4	690.1	225.0	2200.0	1438.8	4	4950.0	114.3	1388.9	216.9
Գուգարք	3	484.6	197.5	5843.3	2405.4	3	2879.0	77.9	14083.3	1260.1

Սպիտակ						1	1250.0	104.9	1348.3	202.0
Ստեփանավան						3	885.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	1	777.7	400.0	400.0	400.0			45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուլյան	12	3450.9	524.0	5425.3	3657.0	50	38388.8	264.5	35353.5	1960.8
Եղվարդ	6	8371.9	204.2	2985.8	895.4	61	50912.3	173.6	27000.0	2860.3
Հրազդան						7	6198.0	117.7	34848.5	1317.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	715.3	2100.0	4227.3	2989.3	12	10956.2	113.6	18750.0	335.4
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	1	31.5	1797.8	1797.8	1797.8	10	12565.6	67.9	180.6	203.7
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	3	1038.0	891.0	2875.0	1565.9	10	10110.0	111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս	4	1939.0	230.0	230.0	230.0	4	5509.0	112.2	1700.0	365.9
Կապան	1	281.8	1147.6	1147.6	1147.6	1	3580.0	67.9	2638.9	354.2
Մեղրի	2	1019.8	290.5	303.8	297.2	14	14173.0	68.5	632.9	269.4
Սիսիան						2	6250.0	123.5	875.0	250.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	1140.0	354.5	1655.9	1005.2	2	1140.0	96.7	7659.6	508.2
Վայք								120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	571.0	75.8	810.0	125.3
Իջևան	7	4650.9	165.8	3000.0	1830.0	14	11084.0	74.1	14423.1	513.3
Նոյեմբերյան								125.0	1948.1	252.0

2016 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1811 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.7 %-ը:

2016 թվականի առաջին եռամսյակում, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 8.0 %-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 15.7 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 132 բնակարանի, 131 անհատական բնակելի տան, 871 հասարակական նշանակության, 194 արտադրական նշանակության օբյեկտի, 447 միավոր հողի, 35 ավտոտնակի և 1 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 12 վարձակալության գործարքի քանակը 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 57.1 %-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ 7.7 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալված 1355.62 հա հողից 2.46 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 1353.16 հա հողից 1238.74 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 37.31 հա արդյունաբերական օբյեկտի, 2.78 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 363.70 հա, որից 361.73 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3799 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.9 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 35.1 %-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 27.3 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (52.2 %), անհատական բնակելի տների (23.4 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.1%) և հողերի (9.5 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2030 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 32.8 %-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 18.2 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 881.39 հա հող, որից 8.93 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 98.1 %-ը կամ 864.86 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 1.83 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արագածոտնի մարզում՝ 154.96 հա, որից 154.02 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 296 գործարք, որից 212-ը՝ Երևանում: 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 33.8%-ով, ընդ որում Երևանում՝ 30.5 %-ով, մարզերում՝ 40.8 %-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել է 32.7 %-ով, ընդ որում Երևանում՝ 29.3 %-ով, մարզերում՝ 42.4 %-ով:

2016 թվականի առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 4553 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 23.8 %-ով, իսկ 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել 5.9 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.9 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (19.3 %):

## **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**